Ն. Ի. ԲՈՒԽԱՐԻՆ

ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՏԱՍՆԱՄՅԱԿԸ

(ՃԱՌ՝ ԱՐՑԱՍԱՆԱԾ ՄԵԾ ԹԱՏՐՈՆՈՒՄ, ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՆԻՍՏՈՒՆ)

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ—1927

19 AUG 2011
9(47)ր.8 1917
Բ-95
24 JAN 2006
1003
13153

Ն. Ի. ԲՈՒԽԱՐԻՆ

ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՏԱՍՆԱՄՅԱԿԸ

(ՃԱՌ՝ ԱՐՏԱՍԱՆԱՄ ՄԵԾ ԹԱՏՐՈՆՈՒՄ, ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԴԻՍՏԻՆ)

889
ՀԱԿ Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Գրքերի Բաժանում
7/II. 1922
Մոսկվա, Մոսկվորեցկայա
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Պետական Հրատարակչություն.—Երևան. 1927

11.03.2013
3X44
ՀՍՍՀ Գլ. Գրադ.
ՀՍՍՀ-Արх.
Ա. Մասիսյան
4794-88

№ 545 Գրատեղվար № 184 բ Տիրաժ 2000
Գեոհրատի առաջին տպարան Վաղարշապատում

1. «Պնդաճակատների ու ցարական դիվանագետների բլոկի, գեներալ Հոջմանի ու մոնարխիզմի փրթող հույսերի, Քաշխատական Իտալիայի ու ինքնակալ Կիրիլլի մասին, կամ թե այն մասին, թե ինչու հին ռեժիմը վերհիշելը ոգտակար է Խ. Ս. Հ. Մ. աշխատավոր բնակչության համար.

Ընկերներ.

Մենք այսոր տոնում ենք տասնյոթ թվականի փետրվարյան օրերի մեր փառավոր հաղթանակի հիշատակը։ Սակայն մեր այսորվա հոբելյանը մի սովորական տարելից չէ, որի նման մենք այնքան շատ ունենք։ Արդեն մի ամբողջ տասնամյակ է անցել այն ժամանակից, երբ ժողովրդյան ցասման մրրիկը տապալեց յերկգլխանի գիշատիչ արծվին՝ կայսերական Ռուսաստանի ինքնակալության այդ խորհրդանշին։ Ճշմարիտ է, կարող են մեզ հարցնել, թե մեզ՝ պրոլետարական հեղափոխության ռազմիկներիս, վո՞ւրքան է վայել տոնել փետրվարյան հեղափոխությունը, որը, ցարին դեն շպրտելով, իշխանությունը բուրժուազիային հանձնեց։ Մեզ կարող են այսպիսի հարցում ուղղել։ Բայց մենք կարող ենք լիակատար իրավունքով պատասխանել, թե այ-

նուամենայնիվ, Փեթրվարյան հեղափոխությունը մեր հեղափոխությունն է, վորովհետև ճշմարիտ են ասում, վոր Հոկտեմբերյան հեղափոխությունը Փեթրվարի մեծ ժառանգն է։ Կարելի յե ուրիշ հարց ել տալ։ Կարելի յե հարցնել, թե՝ իսկապես, ինչ իմաստ ունի այն, վոր մենք վերհիշում ենք ցարական ինքնակալությունը՝ մեր յերկրի այդ նզովքը, այն ժամանակ, յերբ վերջին մի ապետի վոսկրները վաղուց են փտել խոնավ հողի մեջ, յերբ հին ռեժիմի մասին հիշողություն անգամ չկա մեր աշխարհում, վորն արտասովոր խորությամբ ե ակոսվել հեղափոխության տրակտորով։ Այս հարցի պատասխանը պարզ ե. այդ հիշողությունները մեզ կրկին ու կրկին համախմբում են մեր պատմության հերոսական եջերի վերապրումների շուրջը։ Ընդհանրապես այս ե նման հիշողությունների իմաստը։

Սակայն նրանք առանձին իմաստ ունեն հատկապես այժմ՝ մեր առաջին վճռական ու մեծ հաղթանակի տասնամյա տարեդարձին։ Այժմ շատ ավելի նպատակահարմար ե, քան յերբևե, վերհիշել հին ռեժիմը, նրա բոլոր «սքանչելիքները» և յերկարատև ու տանջալից պայքարը նրա դեմ։

Մենք, իրոք, գիտենք, թե ինչպես ե մեր այժմյան միջազգային դրությունը։ Հեռագրական յուրաքանչյուր ծիծեռնակ նորանոր լուրեր ե բերում այն՝ այսպես կոչված՝ «խաչակիր արշավանքի» մասին, վոր պատրաստում ե մեր դեմ միջազգային բուրժուազիան անգլիական բուրժուազիայի գլխավորությամբ։ Մենք, իհարկե, կատարյալ հիմք ունենք պնդելու, վոր բուրժուական կարգի ուժերին չի հաջողվի մեզ վրա հարձակվել ամենամոտ ժամանակում։ Սակայն, ընկերներ, սրանից ամենևին չի հետևում, թե մենք պիտի աչքերնիս փակենք այն, իրոք կատաղի, նախապատրաստության հանդեպ, վոր կազմակերպում են մեր դեմ կապիտալիստական պետությունների դեկավար դասակարգերը՝ իրենց գլուխ ունենալով դեպի իր անկումը դիմող, բայց դեռ շատ հզոր և դեռ շատ ուժեղ Բրիտանական կայսրության կոնսերվատորներին։ Հենց այս պատճառով ել ոգտակար ե հիշել այն, ինչ վոր արդեն վաղուց ե մոռացության տրված և վաղուց խոտակալած։ Վորովհետև, իրոք, մի թե մենք չը գիտենք, վոր ներկայումս անգլիական պաշտոնական դիպլոմատներն անմիջական հարաբերություններ ունեն ցարական հին դիպլոմատիկական կորպուսի հետ։ Մի թե մենք չգիտենք, վոր ներկայումս անգլիական «պնդաճակատ» մոնարխիստները միասնական ֆրոնտ են կազմակերպում մեր դեմ։ Մի թե մենք վկա չենք լինում ֆաշիստական Իտալիայի միջազգային քա-

ղաքականության սուր շրջակետին, այն Իտալիայի, որ մի յուրահատուկ ցեզարիզմի, այսինքն խորապես մոնարխիստական մի սկզբունքի դրոշն է պարզել։ Միթե վերջերս մենք «հաճույքով» չկարդայինք այն նշանակալից տողերը, որոնք բնութագրում են մտավիճակն իմպերիալիստական պատերազմի ու Բրեստի հաշտության հերոսներից մեկի՝ գեներալ Հոֆմանի, որը հայտարարում է, թե՝ այսպես կոչված, «քաղաքակրթության» ու Խորհրդային Միության մեջ յեղած վեճը միայն զենքի ուժով կարող է լուծվել։ Միթե վերջերս չէ՞ր, որ լսեցինք ֆրանսիական մամուլի գաղղիական աքաղաղների կանչերը մեր դեմ։ Իվերջո՝ միթե մենք չէ՞նք տեսնում, թե ինչպես են սկսում՝ ոտարյերկրյա կապիտալիստական ոժանդակության վոսկյա բարեբեր անձրևի ներքո՝ կենդանանալ մեր եմիգրանտները՝ այդ կիսադիակները, այդ չորացած մումիաները, ինչպիսին են, օրինակ, մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայևիչ «Ցերկարը», կամ «համառուսաստանյան ինքնակալ» Կիրիլ Վլադիմիրովիչը, որի մասին մի ժամանակ ասում էին, թե նա յապոնական պատերազմի ժամանակ միայն այն պատճառով չխեղդվեց, որովհետև «աղբը լողում է» (ծափ., ծիծաղ)։ Միթե մենք արդեն չունենք այն մարդկանց հանձնառությունը, որոնք պատկանում են բրիտանական կառավարական բարձր շրջաններին և խոստովանում են, որ կապեր են ունեցել ցարական դիպլոմատներից մեկի՝ Սաբլինի հետ։ Վաղուց չէ, որ մեր թերթերում հրապարակվեցին ցարական վայրահաջի «զեկուցագրերը» — դոկումենտներ, որոնք չեն հերքվում այն պարզ պատճառով, որ նրանց հերքել չի կարելի, որովհետև նրանք այսպես կոչված «Զինովյևի նամակից» տարբերվում են մի բանով՝ իրենց անպայման ճշմարտապատմությամբ։

Հատկապես այժմ, յերբ միապետական կլիկները միջազգային ինտերվենցիոնիստական նվագախմբում նվագ սկսողներ են հանդիսանում մեր դեմ, մեր բանվորները, մեր գյուղացիները պիտի առանձնապես հիշեն, թե ինչ եր ներկայացնում իրենից այն իրավակարգը, որ խորտակվել է սրանից տասը տարի առաջ։

2. Անգլիական լորդերի նախապատերազմների, բրիտանական արքայի մահապատժի ու Անգլիայում միապետության վերացման, նրա վերականգնման ու ուրիշ շատ հետաքրքիր խնդիրների, ինչպես, օրինակ՝ «Զինովյևի նամակի», պարլամենտական ակտերը թագցնելու ու միքանի պետական անձանց պատմական կալկուլյացիայի սխալ մեթոդների մասին.

Ամենքին հայտնի յեն ատելության այն խոր պատճառները, որ տածում է բուրժուազիան

դեպի հարաճուն Խորհրդային Հանրապետությունները։ Ճիշտ այդպես ել՝ ամենքին հայտնի յեն այն հատուկ պատճառները, վորոնք կապված են գաղութային հեղափոխական շարժման աճման հետ. հայտնի յե, հատկապես, առանձնահատուկ սրությամբ դրված անգլո-խորհրդային հարցը։ Կարելի յե հոգեբանորեն հասկանալ, թե ինչու յեն բրիտանական կոնսերվատորներն իրենց աչքերում «արյունաթաթավ մանուկներ» տեսնում խելակորույս կատաղության պահուն։ Սակայն, մեզմ արտահայտված, այնքան ել պարզ չեն այն ուտոպիկ հույսերը, վոր ակներև սնուցանում են իրենց մեջ վորոշ «պնդաճակատներ»։ Խոսքս Խորհրդային իշխանության խորտակման նկատմամբ տածած հույսերի մասին է։ Իսկապես, չի կարելի այդ մարդկանց ուտոպիստ չանվանել, վորովհետև լուրջ ու ճշգրիտ հաշվառումը ուժերի այն փոխհարաբերության, վոր դասավորվում է ներկայումս միջազգային մասշտաբով, հաղիվ թե կարողանա առանձնապես թևավորել մեր հակառակորդներին ու նրանց դեպի ռազմական ընույթ կրող զանազան վոտնձգություններ մղել։ Սակայն, դուցե, այստեղ նրանց կուրացնում կամ թևավորում են ուրիշ հավելյալ պատճառներ։ Ո՞վ գիտե։ Դուցե այստեղ վորոշ նշանակություն ունի այն հանգամանքը, վոր բրիտանական արքայական ընտանիքը սերտ ազգակցական կապեր ուներ Ռոմանովների ընտանիքի հետ, և դեպի վերջինս յեղած անքաղաքավարի վերաբերմունքն առանձնապես հիվանդագին կերպով է ընդունվել Անգլիայում՝ միապետական սկզբունքների կողմնակիցների կողմից։ Սակայն, այս դեպքում, հարկավոր է հիշեցնել, վոր իր ժամանակին Նիկոլայ Ռոմանովի տակը փորում ել և անգլիական դեսպանը՝ սեր Բյուկենենը։ Դուցե այստեղ դեր են խաղում և միքանի սխալ հասկացված դասեր՝ առնված իրենց հարազատ անգլիական պատմությունից։ Բուրժուական շրջաններում հաճախ ենք նման յերևույթների հանդիպում։ Յերբ նրանք կորցնում են իրերի դասավորման ճշմարիտ հաշվառման ընդունակությունը, այն ժամանակ այդ կորուսած ուղիղ հաշվառումը փոխարինվում է «թանձր սուրճի գավաթի վրա կատարվող» զանազան գուշակություններով։ Զարգանում է մի յուրահատուկ միստիցիզմ՝ հավատ առ կանխանշանները, հավատ առ «թիվը»։ Այսպես, արդեն շատ անգամ եյին բարբաջում, թե «ինները» խորհրդավոր թիվ է, և թե մեր դիկտատուրան հենց իր ինն երորդ տարում պիտի իր պարտավորեցուցիչ «վախճանը» գտնի։ Սակայն «տասն» ել նշանակալից թիվ է, մանավանդ անգլիական պատմության համար։

Իսկապես, յեվրոպական առաջին բուրժուական հեղափոխության՝ անգլիական հեղափոխության ժամանակ հեղափոխական իշխանությունը տասը տարի կանգուն մնաց։ Յեվ գուցե այն հանգամանքը, վոր նոր ռեժիմի տապալումն Անգլիայում յեղավ տասերորդ տարում, անգլիացիների մեջ առանձին սնոտի հույսեր ե սնուցանում, թե նման «վախճան» կլինի և մեզանում։ Ինչ վոր — գրողը տանի — մենք պիտի «քաղաքակրթված» յերկրներից որինակ վերցնենք։ (Ծիծաղ, ծափահարություններ)։

Իսկապես, ինչ ե պատահել Անգլիայում։ Հարկավոր ե այս վերհիշել, վոր կարողանանք հասկանալ անգլիական ազնվականության նախապաշարումների ամբողջ անհիմն լինելը։ Կարծում եմ, վոր անգլիական պատմության փաստերը հիշեցնելը վոչվոք և վոչ մի կերպ «ինտերվենցիա» և «ոտար պետության ներքին գործերին միջամտել» չի համարի (ծիծաղ, ծափահարություններ), վորովհետև խոսքն այնպիսի անցքերի յե վերաբերում, վորոնք չափազանց պատկառելի հասակ ունեն, իսկ մեր «խորհրդային ագենտներին» XVII դարն առաքել չենք կարող, անգամ յեթե մեր բոլոր ջանքերը գործադրենք։

Ահա թե ինչ ե կատարվել 1649 թվի հունվարի 27-ին։ Համայնքների պալատի, այսինքն

անգլիական պարլամենտի կողմից նշանակված «Բարձրագույն պալատը» անգլիացոց թագավորի համար հետևյալ դատավճիռն ե արել.

«Կարլ Ստյուարտը՝ իբրև բռնակալ, դավաճան, մարդասպան յեվ պետության թշնամի, դատապարտվում մահվան պատժի՝ գլխատման միջոցով»։

Այս վճիռն իկատար ե ածվել հունվարի 30-ին։ Հենց այդ ժամանակ ել համայնքների պալատն ընդունել ե մի դեկլարացիա, վորով դավաճան ե հայտարարվել ամեն վոք, ով թագավոր կհայտարարեր մահապատժի յենթարկված թագավորի վորդուն կամ մի վորևե այլ քաղաքացու։ Փետրվարի 7-ին միապետությունը պաշտոնապես վերացվել ե այսպիսի պատճառաբանությամբ.

«Փորձով ապացուցված ե,—յեվ պալատն այս հայտարարում ե. վոր թագավորի պաշտոնն այս յերկրում անոգուտ ե, ծանրաբեռնող ու վտանգավոր՝ ժողովրդյան ազատության, ապահովության ու բարոությանն համար։ Սրա հետեվանքով ել՝ այսուհետև նա վերացվում ե»։ (Ծափահարություններ)։

Ինչպես հիշեցինք, այս կատարվեց 1649 թվին։ Իսկ 1660 թվին, այսինքն 10 տարի հետո (ահա այս ե, վոր, ըստ յերևույթին, հույսեր ե ներշնչում կոնսերվատիվ «յերիտասարդներին» և «սփոփանք պատճառում» պնդաճակատ «ծերուկներին») կատարվում ե այսպես կոչված

«Ստյուարտների ռեստավրացիան»—մահապատժի ենթարկված Կարլ I-ի վորդու՝ Կարլ II թագավորի վերադարձը։ Ընդ սմին պարլամենտը (իհարկե ուրիշ կազմով) վորոշում է, վոր «համաձայն թագավորության հնագույն ու հիմնական որենքների հիմունքների՝ կառավարությունը բաղկացած է ու պիտի բաղկանա թագավորից, լորդերից ու համայնքներից»։

Նոր թագավորի ու պարլամենտի կողմնակիցները, բնականաբար, բավական քանակությամբ մարդիկ կախեցին այն անձնավորությունների շարքից, վորոնք իրենց համոզմունքներով հին պարլամենտի վորոշումների կողմնակից եյին։ Մինչև անգամ նշխարները հանգուցյալ Կրոմվելի՝ հեղափոխության այդ դիկտատորի, վորի կենդանության ժամանակ եր կորվել Կարլ I-ի գլուխը, այո, հենց դրա նշխարները, ժողովրդին ավելի լավ խրատելու համար, «կախաղան հանվեցին»—առ հառավելագույն բերկրանս արիստոկրատ ստահակների։

Այսպիսով՝ շրջագիծը կրկին փակվեց, «ժամկետները» կրկին լրացան, անգլիական թագավորը նորից վերահաստատվեց իր տեղում, և վերականգնվեց միապետությունը, վորը 1649 թվին ծանրաբեռնող ու վտանգավոր եր ճանաչվել ժողովրդյան բարորության համար։

Հետաքրքիր է նշել մի բնորոշ «ժանրամասնություն»։ Պարլամենտի վորոշումները՝ ընդդեմ միապետության, վերջնիս կողմնակիցները պատռեցին ու հանեցին պարլամենտական արձանագրությունների միջից։ Եթե այժմյան «պնդաճակատները» իրապես գոյություն չունեցող «Զինովյևի նամակը» իրական են դարձնում, ապա նրանց փառավոր նախնիքները անիրական եյին դարձնում այն, ինչ վոր իրոք գոյություն ուներ։ Այսպիսով՝ պատմական կեղծիքը բավական ամուր «տրադիցիա» ունի, և Զինովյևի նամակը կեղծելը, համաձայն բոլոր որենքների, «նախադեպի» վրա չե հենվում։

Ինչպես ել վոր յեղած լինի, միապետի մահապատժից հետո տասը տարի անց, միապետը կրկին հայտնվեց բեմի վրա։

Անգլիական պատմության այս «դասը», ըստ յերևույթին, փարոսի պես անդադար փայլում է Անգլիայի ղեկավարների աչքերի առջև։ Ճշմարիտ է, այդ դասը, ամբողջությամբ առած, այնքան ել «հարմար» չե անգլիական միապետականների համար, վորոնք միշտ իրենց սեփական պետության որինակներն են վկա կանչում, վորովհետև՝ չե՞ վոր դեռ վոչվոք չի ապացուցել, թե հարկավոր է որինակ վերցնել վո՛չ թե 1949 թվի, այլ 1660 թվի պարլամենտից։ (Ծիծաղ)։ Չե՞ վոր

1649 թվին ել անգլիացիներն ելին գործում, և հո չէր կարող Անգլիան, ընդամենը մի տասնամյակի ընթացքում, այդպես արագորեն փոփոխվել իր՝ իբր «քաղաքակրթողի», դերի մեջ։ Մենք բարձր արժեք ենք տալիս այդ յերկրին, ինչպես և ամեն մի քաղաքակրթված յերկրի, և կարող ենք, առանց մեր պրոլետարական գիտակցությանը վորևե անարգանք հասցնելու, նրան՝ նրա պատմության վորոշ շրջաններում՝ հեղափոխական յերկրի որինակ համարել՝ հակառակ անգլիական ներկա բուրժուազիայի խանժայության ու կեղծավորության, վորը գեներալ Հոֆմանը քողարկում է «մեծ քաղաքակրթություն» բառերի տակ։

«Թանձր սուրճի գավաթի վրա կատարվող զուշակություններն» ու խորհրդավոր թվերի առաջ ծունկ խոնարհելը (ճշմարիտ, մենք պիտի «ամբողջ հոգով» ասենք այս մեր հակառակորդներին) նրանց բարի հետևանքի չեն հասցնի։ Յերբ մարդիկ սկսում են զանազան սնոտի նշաններ հորինել, այդ հենց առաջին նշանացույցն է, վոր նրանց գործը վատ է գնում։ Բայց մենք՝ միավորված մարդկային սեռի ընդհանրությամբ (անգլիական լորդերն ել, մենք ել մահկանացու յենք, քայլում ենք յերկու վոտքով և կերակրվում ենք բերանի խոռոչի միջոցով) (ծիծաղ), այո, մենք ցանկանում ենք «մարդկայնորեն» խորհուրդ տալ նրանց, վոր իրենց քաղաքականությունը չպայմանավորեն այնպիսի նկատառումներով, վորոնք վայել են ցնդված սնոտիապաշտ պառավներին միայն։ Այդ նրանց բարի հետևանքի չի հասցնի, ինչպես համոզեցուցիչ կերպով ցույց տվեց և ապացուցեց ռուսական ցարիզմի պատմական փաստը։

Սովորաբար նման «վերլուծությունը», վոր միայն նմանությունների վրա յե հիմնվում, իր մեջ թաքցնում է այն հիմնական սխալը, այն հիմնական արատը, վոր մարդիկ հաշվի չեն առնում իրական հանգամանքների մեջ կատարված խորագույն փոփոխությունները։ Այդ պատճառով ել համոզմունքի նման մի բան է առաջ գալիս նրանց մեջ. դե, յեթե հեղափոխական իշխանության տասը տարին մեզ հայտնի բոլոր պատմական ժամկետներից ամենայերկարն է, ապա, հետևաբար, այդ ժամկետ է, և նրանից խուսափել չես կարող։ Յեթե մինչև իսկ Անգլիան, վոր ամենաընտիր կոշկի նրբանն է ժատակարարում և, իհարկե, պիտի մատակարարի և ամենաընտիր հեղափոխությունները, յեթե մինչև իսկ նա յե հեղափոխական իշխանության անհնարինությունը ցուցահանել, յեթե նույնիսկ նա յե հաստատել այն «պատմական որենքը», թե «ա-

ռանց հետագա ռեակցիայի հեղափոխություն չկա», յեթե մինչև անգամ այստեղ՝ Անգլիայում, «հեղափոխական անմտության» ժամկետը մի տասնամյակի յերկաթե շրջանակից չի դուրս յեկել, ապա, ի՛սկզբանե, խորհուրդներն արդեն պիտի «անխուսափելիորեն» ընկնեն։ Իսկ Նիցշեն ասել է՝ «ընկնողին հրի՛ր»։

Այդ բոլոր հույսերի մեջ մի «փոքրիկ» սխալ կա։ Այդ, ընդամենը, կատարյալ անհասկացողությունն է այն հանգամանքի, որ այժմ ժամանակներն այլ են, որ համաշխարհային պատմական դրությունն ու մարտնչող ուժերի հիմնական փոխհարաբերությունները բոլորովին այն չեն, որ ներկայի ու ապագայի մասին դատել իբրև անցյալի սոսկ կրկնության մասին, առանց մեր ժամանակաշրջանի կոնկրետ առանձնահատկությունները հաշվի առնելու՝ անհեթեթություն է։ Միապետի գլուխը կացնահատելն իր «նախադեպն» ուներ յե՛վ անգլիական յե՛վ ֆրանսիայի պատմության մեջ։ Բայց ահա հոկտեմբերյան հեղափոխությունն արդեն «համարյա» իր «նախադեպը» չունի («համարյա» յենք ասում, որովհետև հիշում ենք Պարիզի Կոմմունան)։ Խորհրդային իշխանությունը «նախադեպ» բոլորովին չունի։ Պրոլետարական դիկտատուրայի տասնամյա գոյությունն ամենևին «նախադեպ» չունի։

Պատմական հանգամանքների այժմյան ամբողջ դասավորությունն առմատապես տարբերվում է նախկին ժամանակներից։ Այստեղից ել բղխում է մեր աներկբայությունը՝ մեր նվաճումների ամրության նկատմամբ։ Սակայն՝ յերբ մեռնող դասակարգերը հավաքում և մեր դեմ են ուղղում անգամ ցարական ու մեծ իշխանական տականքներին, յերբ նրանք համաձայնության են գալիս ցարական դիպլոմատիայի տակի-մասխարաների հետ, յերբ աշխատում են շրջանառության մեջ դնել այնպիսի դեմքեր, որոնք այնքան բնորոշ եյին ցարական միապետության ժամանակներում,— ապա մենք ամենևին ել չպիտի ձեռքերնիս ծալած նստենք, ապա ավելի քան տեղին է հիշեցնել, թե ինչ եր մեզնում Ռոմանովների միապետությունը, որի դեմ մարտնչեց սերունդների մի ամբողջ շարք, և որի տապալման համար մղված կռվում ընկան մեր յերկրի լավագույն ուժերը։

Ա 79-84
13153

3. Ռուսաստանի ինքնակալության բնույթի, կալվածատիրական հողի, գյուղացիական սակավահողության, հարկերի յեվ ցարիզմի կողմից գյուղացիներին պատճառած այլ հանույթների մասին.

Ինչպես մեր յերկրում, այնպես ել մյուս յերկրներում ինքնակալ միապետությունը կալվածատիրական իշխանության մարմնացումն եր։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
U.S.S.R. Public Library

Կալվածատերերն ընդհանրապես, կալվածատերճորտատերն առանձնապես, կարելի է ասել, ամենաարյունարբու և ամենաճնշող դասակարգն էին։ Ֆաշիստական մարկայի բուրժուազիան՝ ֆինանսական կապիտալի դիկտատուրայի այդ վերջին մարմնացումը, միայն իր պատմական վազքի վախճանի, այսինքն միայն իր տիրապետության կատարին մոտենալով կարող է, այդ կողմից, մրցել նրա հետ։ «Մեր» կալվածատերերն առանձնապես յերկար դիմացան։ Յեվրոպայի վոչ մի յերկրում կալվածատիրական դիկտատուրան այնքան յերկար չդիմացավ, վորքան մեզնում, ուստի ամենևին էլ զարմանալի չե, վոր ցարական Ռուսաստանը, մանավանդ անցյալ դարու վերջին տասնամյակներում և ներկա դարու սկզբում, «ժողովուրդների բանտ», «միջազգային ժանդարմ», «ասիական բռնապետություն» անուններով եր հռչակված, վորովհետև այդ կարգը, այդ ռեժիմը Յեվրոպայում արդեն վաղուց եր չքացել, արդեն վաղուց եր թաղված, պատմական անցքերի ընթացքի զորությամբ։

Մեր մարքսիստական շրջանում մինչև այսոր էլ վեճեր կան այն մասին, թե՝ իր կյանքի վերջին տարիներում ինչ եր ներկայացնում իրենից ցարական ինքնակալությունը։ Մենք պիտի այս հարցին ըստ ամենայնի վորոշ պատասխան

տանք։ Ցարական ինքնակալությունը իր գոյության ամենավերջին տարիներին անգամ չեր դադարում կալվածատեր-ճորտատիրոջ իշխանություն լինելուց։ Սխալ է այն տեսակետը, վոր իբր թե 1905 թվի հեղափոխությունից հետո ցարական ինքնակալությունն արմատապես փոխեց իր դասակարգային բնույթը։ Նա կալվածատիրական ռեժիմ եր, այդպես էլ մնաց։ Մեր կայսրությունը կալվածատիրական պետության մի մեծ, վիթխարի ու հրեշայնորեն-ճնշիչ մեխանիզմ եր։ Ճշմարիտ է, ցարական ինքնակալությունը, մանավանդ 1905 թվի հեղափոխությունից հետո, ըստ Լենինի արտահայտության, «թեթև քայլեր արեց դեպի բուրժուական միապետությունը», սակայն դրանք հենց թեթև քայլեր եյին միայն։ Իշխանության հիմքը $^{9}/_{10}$-ով վոչ թե բուրժուական եր, այլ վայրի, ֆեոդալա-ճորտատիրական։ Դրանով էլ ավելի սուր, էլ ավելի խորն եր դառնում ինքնակալական ռեժիմի ու յերկրի ամբողջ զարգացման հակասությունը։

Ցարիզմը կալվածատեր-ճորտատիրոջ դիկտատուրա յեր, յեվ այժմ, ամենից առաջ, այս պիտի իմանա, այս պիտի հիշի մեր գյուղացիությունը։

Կալվածատիրական ռեժիմի սոցիալական բաղադրությունը, սոցիալական հիմունքը, կալվածատի

ական հողատիրություն էր։ Հայտնի է և լայն ժողովրդականություն է վայելում ընկեր Լենինի՝ մեր յերկրի հողային հարաբերությունները շատ ցայտուն կերպով գծող՝ հաշվապատկերը։ Յեվրոպական Ռուսաստանի 50 նահանգներում 10 միլիոն գյուղական ծխերն ունեյին 73 միլիոն դեսիատին հող, և համարյա այդքան էլ՝ 62 միլիոն դեսիատին ունեյին 28 հազար կալվածատիրական տնտեսությունները։ 10 միլիոն գյուղական ծխերի դիմաց կանգնած եյին միայն 28 հազար «բարեծնունդ ու աղտոտ լենդլորդերը», ինչպես Լենինն է անվանում նրանց։ (Ինչպես տեսնում եք, բարեպատեհ դիպվածով, Լենինն էլ է «անգլիական անալոգիայի» դիմում)։ 669 խոշոր կալվածատերերից յուրաքանչյուրը, համարյա, 30 հազար դեսիատին հող ուներ։ Իսկ 28 հազար տնտեսություններին պատկանող 62 միլիոն դեսիատինից 44.500.000 դեսիատինն ուղղակի և անմիջապես պատկանում եր «բարեծնունդ ազնվականության դասին»։ Այս միքանի թվերն արտակարգ ցայտունությամբ ցույց են տալիս մեզ ցարական ինքնակալության դասակարգային-տնտեսական հիմքը։ «Հողը կալվածատերերին պիտի պատկանի»—ահա այս է ցարական ռեժիմի հիմքը, և այս պիտի հիշեն մեր գյուղացիները, յերբ ամբողջ աշխարհի

միապետականների Խորհրդային Միության դեմ կազմակերպվելիք ինտերվենցիայի մասին են յերգում և «խաչակիր արշավանք» են պատրաստում, իբրև թե «ի պաշտպանություն քաղաքակրթության»։ Ռոմանովներն այս կալվածատիրական ռեժիմի պերսոնել կամ, ավելի լավ է ասել, ընտանեկան մարմնացումն են։ Ինչպես հայտնի է, նրանք խոշոր կալվածատիրական ընտանիք եյին։ Իսկ այն հանգամանքը, որ հողի հսկայական քանակությունը գտնվում եր ազնվականության ձեռքին, մի հավելյալ գիծ եր մտցնում մեր յերկրի՝ Հոկտեմբերյան հեղափոխությունից առաջ յեղած՝ յերկրագործական կարգի մեջ։ Հարցը միայն այն չեր, որ խոշոր սեփականատերերի չնչին թվի տրամադրության ներքո հողի ահագին քանակություն եր գտնվում, այլ նաև այն, որ այդ հողը վոչ թե պրոգրեսիվ տեխնիկայի, վոչ թե կապիտալիստական հիմունքներով եր մշակվում, այլ ահագին գնով վարձկալության եր տրվում հողազուրկ ու կիսաքուրացիկ գյուղացիներին, որոնք, հողից զուրկ լինելու հետևանքով, ուտելու բան չունեյին։ Այսպիսով՝ իշխում եյին շահագործման կատարյալ միջնադարյան յեղանակները և գյուղացուն հողի կարիքով ու այսպես կոչված սովածության վարձկալությամբ

խեղդելու քաղաքականությունը։ Եթե պայծառափայլ բյուրոկրատներն ու խելառ ճորտատերերը մինչև 1861 թվականն իրենց ճորտերի աղջիկներին փոխում էին մի շիշ գինով, կամ շների վոհմակով, իրենց ճորտերի տղաներին՝ քերծեների լակոտներով, ապա 1861 թվականից հետո, յերբ գյուղացին ազատվեց յե՛վ հողատիրությունից, յե՛վ հողից, կալվածատերն սկսեց գյուղացուն խեղդել սակավահողությամբ, սովածության վարձկալությամբ ու տուրքերով։

Այդ «մեքենան» աշխատում եր մինչև կալվածատիրական ռեժիմի բուն անկումը։ Յեվ այս պիտի հիշի այժմ մեր գյուղացին, չնայած վոր արդեն 10 տարի յե անցել այն ժամանակից, յերբ ռուսաստանյան ինքնակալությունը դագաղն ե խցկվել։ Կոմսերի, պայծառափայլ իշխանների, բարոնների ու կոմսուհիների հրեական այդ ամբողջ բուրգը, վոր գյուղացիության հյութերն եր ծծում, այդ ամբողջ տիտղոսավոր բյուրոկրատիան՝ կալվածատիրական դասակարգի այդ բոլոր ներկայացուցիչները, հրեշային ահռելի պարազիտներ եյին ժողովրդյան մարմնի վրա։ Յեվ յեթե այժմ Պ. Ն. Միլյուկովը բարեսրտորեն մի «յուրահատուկ» թեորիա յե հնարում, ըստ վորի Ռուսաստանի բնակչությունն ապրում եր «պետության հաշվին», ապա այդ թեորիան հանդիսանում ե մի որինակ այն բարեխմարությունների, վորոնց շարադրանքով զբաղվում են միայն այնպիսի մարդիկ, վորոնք մեր յերկրի իսկական ժողովրդից, իրենց անկարևորության պատճառով, լիակատար հրաժարական են ստացել։

4. Ինքնակալության քաղաքական քաղաքականության, պատերազմների, ժողովրդին զգիության պատվաստման ու գեպի կուլտուրան ուղեցած առելության մասին, կամ մի բացատրություն այն մասին, թե ինչու յեն անգլիական միքանի գործիչներ այնքան սիրում ցարական սպասարկուներին.

Մենք արդեն հիշեցինք, վոր ցարական ինքնակալությունը մեր յերկրի ամբողջ զարգացման հետ սուր կոնֆլիկտի մեջ մտավ։ Հարկավոր ե գործի այդ կողմի վրա կանգ առնել։ Հաճախ հարց են տալիս. «Սակայն չե՞ վոր Ռուսաստանը վերջին ժամանակներս, պատերազմից առաջ, շատ արագ եր զարգանում»։ Այո, սակայն վորքան վոր զարգանում եր նա, զարգանում եր հակառակ ինքնակալության։ Կապիտալիստական զարգացման վորոշ արագության հիմնական հավելյալ պատճառ եր հանդիսանում ռսարեկրյա՝ իր համար զետեղվելու վայր վորոնող՝ կապիտալի զգալի հոսանքը։ Մյուս կողմից՝ սակավահող կիսամուրացիկ գյուղացիությունը, վոր պլոկված եր հրեշային տուրքերով ու վարձկալության վճարնե-

րով (հողի վարձկալության վճարը կատաստրոֆիկ արագությամբ էր բարձրանում), չէր կարող իրենից մի բավականաչափ տարածունակ շուկա ներկայացնել։ Անագին շրջաններ, առաջին հերթին մեր «միջին գոտու» շրջանները դեպի անկումն էին գնում։ Բավականաչափ շուկաների ու հարկի յենթարկելու բավականաչափ առարկաների այդ բացակայությունը մասամբ փոխարինելու համար՝ ինքնակալ կառավարությունը պիտի արտաքին ավանտյուրաների դիմեր և նորանոր յերկրներ կողոպտեր։ Ահա թե ինչու յեր ինքնակալությունն արտաքին քաղաքականության մեջ այնպիսի ագրեսսիվ ու ավազակային բնույթ յերևան բերում։ Թեև, իշխանության տեսակետից, այդ վոչ թե ֆինանսական կապիտալի ու բուրժուազիայի, այլ կալվածատիրոջ, կալվածատեր-ճորտատիրոջ դիկտատուրա յեր, սակայն այդ ճորտատերն արտաքին հարձակողական քաղաքականություն եր վարում, և նա այդ անում եր վոչ թե այն պատճառով, վոր ստիպված եր հաշվի առնել բուրժուական դասակարգի պահանջները, վոչ միայն այն պատճառով, վոր այդպիսի քաղաքականություն եյին թելադրում նրա դաշնակից բուրժուական պետությունները, այլ և այն պատճառով, վոր այդ պահանջում եյին նրա սեփական՝ կալվածատիրական շահերը,

վորը նա ներկայացնում եր իբրև «իսկական ռուսական» շահեր։

Այսպիսով՝ նրա ներքին քաղաքականությունը սերտորեն կապված եր նրա արտաքինի հետ։ Սակայն պատերազմները ծանրանում եյին յերկրի վրա իբրև առհելի բեռ, սարսափելիորեն խախտում եյին ամբողջ ցարական բյուրոկրատիկական մեքենան՝ մինչև վերջին սահմանը քայքայելով ու այլասերելով նրան։ Յեվ ամենևին ել պատահական չե այս հանգամանքը, վոր ցարական ինքնակալությունը իր կործանման rեպետիցիան՝ առաջին հզոր հարվածն ստացավ «անհաջող» պատերազմի հետևանքով։ Ռուս-յապոնական պատերազմի ժամանակ ստացած անողորմ պարտությունից հետո մենք ունեցանք 1905 թվականը, Պրեսնյայի բարրիկադները և հզոր ագրար շարժումը գյուղացիության մեջ։ Ինքնակալությունը փլվեց այն հեղափոխության կացնի տակ, վորը մերձ հարակցություն ուներ համաշխարհային մեծ սպանդի ժամանակ կայսրության կրած ռազմական սնանկության հետ։ Յեթե 1905 թվականը ինքնակալության կործանման rեպետիցիան եր, ապա 1917 թվականը նրա գերեզմանը հանդիսացավ։

Ցարիզմի շահագործման ահագին մեքենան կարող եր միաժամանակ կանգուն մնալ միայն

ժողովրդական լայն խավերի, առաջին հերթին գյուղացիության ահռելի տգիտության տևողականության պայմանով։ Խոշոր չափով այդ տգիտության վրա յեր հենվում ցարական ինքնակալության «համեմատական ստաբիլիզացիան»։ Սրանով ե բացատրվում այն բացառիկ կատաղի ատելությունը, վոր ինքնակալությունը տածում եր մինչև անգամ դեպի բուրժուական կուլտուրայի արտահայտությունները և այն՝ առանձնապես կատաղի՝ ատելությունը, վոր նա տածում եր դեպի այն հատուկենտ ու փոքրիկ խմբակները, վորոնց հաջողվում եր բարձրանալ և ճանապարհ բանալ դեպի կուլտուրայի սանդուղքի բարձրագույն աստիճանները։ Հայտնի յե ցարական ինքնակալության մինիստրներից մեկի դարձվածքը «խոհարարների զավակների» մասին, վորոնց տեղը չե համալսարանը։ Ցարական ինքնակալությունը հաճախ իսկական կենդանական ատելություն եր ցույց տալիս մինչև անգամ դեպի պարզ բուրժուական կուլտուրան։ Այս կողմից շատ հետաքրքիր ե մի դեպք, վորն, իսկապես, վերաբերում ե «նիկոլայան» ժամանակաշրջանին, այսինքն Նիկոլայ առաջնի կամ, ինչպես նրան անվանում յին, Նիկոլայ Պալկինի, ժամանակներին։

Յերբ վախճանվեց Պուշկինը, վորի՝ ռուսաց

գրականության համար ունեցած՝նշանակությունն ամենքին հայտնի յե, և յերբ հարկավոր եր նրան թաղել, «գրաքննական պայմանների» հետևանքով վոչինչ չեր կարելի գրել Պուշկինի մասին։ Բերենք մի կարճառոտ խոսակցություն, վոր կապված ե այս հարցի հետ և կատարվել ե այն ժամանակ, և վորի բովանդակությունը հրապարակված ե հայտնի գրող Վերեսայևի՝ Պուշկինի մասին գրած՝ մի շատ հետաքրքիր գրքույկում։ Ա. Ա. Կրայևսկին մի փոքրիկ ազդ տպագրեց բանաստեղծի մահվան մասին, Կրայևսկուն անհապաղ «բացատրության» կանչեցին դպրոցական շրջանի հոգաբարձուի՝ իշխան Դոնդուկով-Կորսակովի մոտ, վորը միևնույն ժամանակ գրաքննական կոմիտեյի նախագահն եր։

Ահա թե ինչպես եր Պուշկինի կողմից փառաբանված «իշխան Դոնդուկը» շշպրում Կրայևսկուն՝ սրա «հանցանքի համար»։

— Յես պիտի հաղորդեմ ձեզ,—ասաց հոգաբարձուն Կրայևսկուն,—վոր մինիստրը (Սերգեյ Սեմյոնովիչ Ուվարովը) չափազանց, չափազանց անբավական ե ձեզանից։ Ինչու՞ համար եր այդ ազդը Պուշկինի մասին։ Այն ինչ շրջանակ ե գծված մի այնպիսի մարդու մահվան ազդարարության շուրջը, վորը վոչ պաշտոնյա յեր յեվ վոչ ել վորեվե դիրք եր գրավում պետական ծառայության աս-

պարիզում։ Այս դեռ կարելի է մի կերպ տանել, այս դեռ վոչինչ։ Սակայն այս ինչ դարձվածքներ են. «Բանաստեղծության արևը»։ Ասեք, իսկ ասուծո, ինչու համար է այսպիսի պատիվը։ «Պուշկինը վախճանվեց... իր մեծ ասպարիզի կեսին»։ Այդ ի՞նչ ասպարեզ է։ Սերգեյ Սեմյոնովիչը հատկապես նկատեց, թե՝ մի՞թե Պուշկինը զորավար էր, հրամանատա՞ր, մինի՞ստր, պետական ա՞նձն։ Վերջապես՝ նա մեռավ քառասնից քիչ պակաս տարիքում։ Վոտանավորներ գրելը, ինչպես արտահայտվեց Սերգեյ Սեմյոնովիչը, դեռ մեծ ասպարեզ ունենալ չի նշանակում։ Մինիստրն, Անդրեյ Ալեքսանդրովիչ, ինձ հանձնարարեց խիստ նկատողություն անել ձեզ և հիշեցնել, վոր ձեզ իբրև ժողովրդական լուսավորության մինիստրության պաշտոնյայի՝ հատկապես պիտո յեր՝ ձեռնպահ մնալ նման ազգարարություններից»։ (Ցիտ. «Красная новь», գիրք III, եջ 157)։ Մի՞թե այստեղ չի յերևում ամենայն պարզությամբ այդ բուֆյերախ նիկոլայևյան ռեժիմը, վոր միայն նահանգապետների յե ճանաչում։ (Ծափեր)։

3. Սուվորին-հայր վկայի ցուցմունքների, մեծ իշխանների, կառավարելու իմաստակալական մեթոդների մասին. նայեվ այն մասին, թե իմաստակալությունն ինչպիսի «բարեբարությունների» է ցույց տվել Ռուսական կայսրության բանվորներին, գյուղացիներին յեվ ազգային փոքրամասնությունների.

Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր չի կարելի ասել, թե հանճարեղությունն եր ծաղկում ցարական Ռուսաստանի վարիչների շարքերում մի այնպիսի ժամանակ, յերբ կար մի անսովոր նեղ շրջանակ, վորի միջից եյին ընտրում ցարական ինքնակալության ադմինիստրատորներին, վորոնք իրենց սեփական յուղի մեջ եյին տապակվում և ուրիշներին մոտ չեյին թողնում այդ շրջանակին։ Անգամ յեթե նկատի ունենանք զուտ կալվածատիրական շահերը, չի կարելի ասել, թե ցարական բյուրոկրատների ներկայացուցիչներն աչքի եյին ընկնում «մտքի արագությամբ»։ Այս, իմիջի այլոց, հասկանում եյին վոմանք այն մարդկանցից, վորոնք իրենց ամբողջ կյանքում «մեծամեծների» կոշիկները լիզելուց չեյին խուսափում։ Այնքին հայտնի յե, վոր աշխարհում Սուվորին անունով մի մարդ կար, վոր խմբագրում եր «Новое время» լրագիրը։ Նրա «Новое время» լրագիրը կապ ուներ պահնորդական բաժանմունքի հետ և կիսապաշտոնական թերթ եր։ Այդ նույն Սուվորինը մեր՝ ռուսաց «հասարակական մտքի» զարգացման հետագա պատմության մեջ շատ բարձր հռչակ ստացավ, այնպես վոր, յերբեմն, ռուսական վորոշ արտահայտության փոխարեն «Սուվորինի վորդիք» են ասում։ (Ծիծաղ) Ահա այդ Սուվորինը, վոր այդպիսի «վորդիներ» է բազմացրել

և վորը ռուսաց կուլտուրայի պատմության մեջ համապատասխան «կուլտուրական» դեր է խաղացել, իր սեփական բավականության համար հիշատակարան է գրել, վորն այժմ հրապարակված է։ Ցավ հետաքրքիր է, թե նա ինչ է գրում, «հոգու համար», այն շրջանների մասին, վորոնց վոչ թե հոգու, այլ «հնչուն մետաղի» համար ծառայեց իր «Новое время»-ով։ Այստեղ տարբերությունը հսկայական է։ Իր «Հիշատակարան»-ի 229-րդ յերեսին գրում է, որինակի համար, մեծ իշխանների մասին, այսինքն կալվածա-ճորտատիրական տիրապետության ժամանակվա կառավարիչների ամենաբարձր կադրի մասին։ Ահա թե ինչ ենք կարդում այնտեղ.

«Լսել եմ, վոր Կուրապատկինին ուղարկում են Կովկաս, իսկ Նրա տեղ նշանակում են Վարշավայի իշխանին։ Կուրապատկինը վոչ մի կերպ չի կարողանում կառավարվել մեծ իշխանների հետ։ Մեծ ցավ են այդ մեծ իշխանները, միայն սրիկաներն են կարողանում յոլա գնալ նրանց հետ, վորովհետև նրանց շահվելու ճնարավորություն են տալիս»։

229-րդ յերեսին Սուվորինը գրում է.

«Պլյուշչիկ-Պլյուշչևսկին պատմում եր, վոր, իբր թե, մեծ իշխան Սերգեյ Ալեքսանդրովիչը յերկու միլիոն կաշառք է վերցրել ողու մոնոպոլիան իր միջնորդությամբ Մոսկվայում տարկետման յենթարկելու համար, վոր իբրև թե այդ մասին անկասկածելի փաստեր ունի Վիտտեն, և վոr թագավորն այդ գիտե։ Վերջին որերս Սերգեյ Ալեքսանդրովիչն այստեղ է յեղել ընդամենը մի հինգ ժամ։ Մեծ իշխաններն այս կամ այն ձևով միշտ ել կաշառք եյին վերցնում յեվ աշխատում եյին շահվել ամեն տեսակ միջոցներով»։ (Սուվորինի «Որագիրը», հրատ. Ֆրենկելի)»։ Ցավ այս ասում է մի այնպիսի վկա, վորի մասին կարելի յե ասել, թե նրա առաջ բոլոր դռները բաց են, վորովհետև նա մուտք ուներ ինքնակալական ռեժիմի հոգու ու մարմնո բոլոր գաղտնարանները, բուն իսկ «սրբություն սրբոցը»։ Հետաքրքիր է նույնպես, թե ինչպես եր ռուսական ինքնակալության առաքյալը, վոր բոլոր խաչփողաններում նրան խունկ եր ծխում և իր ապականյալ լեզվով նրան փառաբանում («Սուվորին-վորդին» այժմ ել է շարունակում ներկա լինել վրանգելյան զորահանդեսներին և հիանալ ռուսական ինքնակալության անցյալ «վոսկե ժամանակներով»), այո, հետաքրքիր է, թե ինչպես եր այդ Սուվորինը «հոգու համար» գրում ինքնակալության կարգերի մասին։ Մի կտոր ել բերենք այդ նույն Սուվորինից։ Ահա թե ինչպիսի չարությամբ է նա բնութագրում ինքնակալության կառուցվածքը.

«Ինքնակալությունը շատ ավելի լավ է, քան թե պարլամենտարիզմը, վորովհետև պարլամենտարիզմի ժամանակ մարդիկ են կառավարում, իսկ ինքնակալության ժամանակ՝ աստված։ Ընդ սին, վոչ թե անտեսանելի, այլ ճշտորեն իմանալի աստված։ Վոչվոք չի տեսնում, բայց ամենքն զգում են ծանրորեն յեվ յուրաքանչյուր կարող է պատուհասվել՝ ամեն չափից վեր յեվ ամեն դեպքում։ Թագավոր աստծուց է դաս առնում և միայն աստծու հետ է խորհուրդ անում, բայց վորովհետև աստված անտեսանելի չե, ապա նա խորհրդակցում է ամենամի պատահողի հետ՝ իր ամուսնու, իր մոր, իր ստաժոքսի, իր ամբողջ բնության հետ, և այդ բոլորն ընդունում է իբրև աստվածային ցուցմունք։ Իսկ մինիստրների ցուցմունքներն աստվածայիններից բարձր են, վորովհետև նրանք հոգում են իրենց մասին, հոգում են նաև թագավորի ու դինաստիայի մասին։ Ինքնակալությունից լավ բան չկա, վորովհետև նա սնուցանում է անգործ, վոչ մի բանի պետք չեկող մարդկանց մի ամբողջ փեթակ, այնպիսի մարդկանց, վորոնք իրենց համար են գործ ճարում։ Այս մարդիկ պատկանում են արտոյնալ դասերին, և նրանց արտոնությունների ամենաբնական մասը հենց այն է, վոր նրանք, գլուխներում

վոչինչ չունենալով, շատերի գլուխը դառնան»։ (Ծիծաղ, ծափահարություններ)։

Ինքնըստինքյան հասկանալի է, վոր բնակչության բանվոր դասակարգի և գյուղացիության լայն խավերի շահագործման անողոք պրոցեսսը պաշտպանվում եր վոստիկանական նզոր ապպարատով։ Յեվ յեթե այսպես կոչված ռուսաստանյան ինտելիգենտներին (գրականագետներին, փաստաբաններին, պրոֆեսսորներին, այսինքն այն մարդկանց, վորոնք, «պենսնե յեն կրում»), այո, յեթե նրանց յերբեմն թույլ եր տրվում ճչալ սոսկալի բարակ դիսկանտով, ապա՝ ժողովրդյան նվաստ խավերին՝ «խուհարարուհու զավակներին», բանվորներին ու գյուղացիներին արդեն բացարձակորեն վոչ մի «մեղմություն» չեր թույլ տրվում։ Բանվոր դասակարգն ու գյուղացիությունը փաստորեն համարյա «որենքից դուրս» եյին գտնվում, և իսպրավնիկների, զեմստվոյի պետերի, ստանավոյների ուրյադնիկների, ժանդարմների, պահնորդական ագենտների, թաղական վերահսկիչների, պրիստավների ու վոստիկանապետների այդ վոհմակը կարող եր անել, ինչ վոր իր քեֆն ուզում եր։ Այն ժամանակից, յերբ բանվոր դասակարգը Ռուսաստանում պատմության ասպարեզն իջավ և սկսեց իր կազմակերպություններն

ստեղծել, նա գտնվում եր ընդհատակում և չեր կարող ընդհատակում չլինել այն քաղաքական կարգի ժամանակ, վոր ամբողջ յերկիրն եր շրջթայել։ Ամենաանմեղ կազմակերպությունների իրավունքներն անգամ չուներ նա. հալածվում եր բանվոր դասակարգի ամեն մի ակտիվություն, ինչ-վոր «ինքնոգնության գանձարկղներն» անգամ հանդուրժելի չեյին։ Ամեն մի կուլտուրլուսավորության հաստատություն, շատ կարճ ժամանակվա ընթացքում, հոգևարքի մեջ եր ընկնում, վորին հետևում եր անխուսափելի մահը։ Գյուղացիական կազմակերպությունների մասին հեշատակություն անգամ չկա։ Ցարական ինքնակալությունն ամբողջ յերկրում դիակների վրա յեր պարում։ Յեթե յերկաթն ու կապանքներն ուղղված եյին բանվոր դասակարգի, իբրև ամենաակտիվ հասարակական դասակարգի դեմ, վոր իր գլխում խռովարար գաղափարներ ուներ, յեթե գյուղացիությունը քաղաքականապես ճընշված եր նույնքան ամրապինդ, վորքան վոր անխնայորեն ճնշվում եր տնտեսապես, ապա պետք է ասել, վոր այդ յերկաթն իր սուր լեզվակով ուղղված եր նաև կայսրության մեջ ապրող ազգային վոտրամասնությունների դեմ։ Ամեն մի, այսպես կոչված, «ծայրերկիր» և «այլազգիների» (այս սիրելի կոչումը ռուսական ինքնակալության գրականության մեջ պաշտոնական անուն եր հանդիսանում մինչև անգամ ավելի լայն շրջաններում) ամեն մի խումբ, «այլազգիների», այսինքն բոլոր նրանց, ովքեր ռուսական ալափների ու ռուսական ինքնակալ դերժիմորդանների տիրող ազգին պատկանելու «պատիվը չունեյին», այո, բոլոր սրանք իրենց վրա զգում եյին ինքնակալական ռեժիմի ծանրությունն՝ ուղղված իրենց դեմ։ Ահա այսպիսին եր ցարական ինքնակալության այդ՝ իրոք դիվական մեքենան։

6. Ժողովրդի՝ առ կալվածատերերը ուղված «սիրո», Պուգաչովի բունտի, հեղափոխական շարժման, ազգակցությունների՝ առ ժողովուրդը ուղված բարի զգացմունքների, հինգերորդ թվականի, կոմս Վիտեյի «Հիշատակարանի», գազան-պրոլետարիատի յեվ Շուլգինի պուլեմյոտների մասին. Ձերնովի «ոխլոկրատիայի» յեվ ամբողջ նախընթացից բղխող, մեր միտքի խնդիրների մասին.

«Ռոմանովների տան» յերեքհարյուրամյա պատմության ընթացքում վոչ թե մի կամ յերկու, այլ շատ անգամ ե ժողովուրդը վեր կացել և լայն մասսաներով ապստամբել այդ դիվական մեքենայի դեմ։

Վերջին լայն ու խորապես մասսայական շարժումը ճորտատիրական ռեժիմի դեմ՝ այսպես կոչված, Պուգաչովի բունտն եր, վոր տիրող

դասակարգի տեսակետից «անիմաստ» եր ու «անխնա»։ Միայն այժմ է մեր Միության պատմագիտությունը բաց արել կալվածատերերի դեմ ուղղված գյուղացիական այդ մեծ շարժմանը վերաբերող արխիվների փոշոտ անդուկները։ Ցեվ միայն այժմ իմացանք, թե վորքան հզոր ու վորքան կազմակերպված եր այդ շարժումը, և նրա մեջ ինչպես եր յեռ գալիս գյուղացու կատաղի ատելությունը դեպի ճորտատեր-կալվածատերը։ Մենք արդեն ունենք Թռուցիկների մի ամբողջ ժողովածու՝ գրված «Պուգաչովի բունտին» մասնակցող ապստամբների բանակում։ Ինքը կյանքն է խոսում Պուգաչովի և նրա մերձավոր ոգնականների Թռուցիկների լեզվով։ Նա խոսում է դաժան ու խիստ կռվի ձայնով։ Ցեթե աղաներն ապստամբներին մկրտեցին «գող» ու «չարագործ» անուններով և նրանց «կոճղակիր» արին, ապա ամբողջ կալվածատիրական ռեժիմի, ամբողջ ճորտատիրական կարգի դեմ բարձրանում եր ժողովրդական կատաղի ատելության ալիքը։ Պուգաչովն իրեն գյուղացիական ցար «Պյոտր Ֆյոդորովիչի» տեղ եր դնում, այդ կեղծանունն իր վրա յեր վերցնում, վոր ոգտագործեր գյուղացիության վորոշ միապետական նախապաշարումները։ Սակայն նրա հրամանները լիաբերան ասում են, թե վոր դասակարգային թշնամու դեմ պիտի ուղղել կռվի զենքերը։

Ահա, որինակի համար, մի քաղվածք մի մանիֆեստից.

«Ովքեր չլսեն իմ շնորհած այս վողորմածությունը, ինչպես վարվում են կալվածատերերն ու ժառանգական հողատերերը, նրանց, իբրև որենքի ու հանրային հանգստության դեմ մեղանչողների, իբրև չարագործների ու իմ կայսերական կամքին հակառակողների, զրկել կյանքից, այսինքն մահվան պատժի յենթարկել, իսկ նրանց տներն ու ամբողջ կալվածքները գրավել ու յուրացնել իբրև վարձատրություն»։

Կամ մի ուրիշ տեղ՝ 1774 թվի հուլիսի հրամանում, գրվում է.

«Նրանց, ովքեր առաջ իրենց կալվածքներում ու մյուլքերում ազնվականներ եյին, այդ մեր իշխանության հակառակորդներին և կայսրությունը վրդովողներին և գյուղացիներին խայտառակներին բռնել, պատժել ու կախել»։

Այս որինակները պարզ ցույց են տալիս, վոր այդ վերջին մասսայական ապստամբական շարժումը ճորտատիրական ռեժիմի դեմ, հիանալի կերպով գիտակցում եր իր դասակարգային նպատակը. նա ուղղակի խոսում է ազնվականճորտատերերի մասին և ուղղակի անխնա կռվի

կոչ է անում ընդդեմ Ռուսաստանի այդ դեկավար դասակարգի։

Ճշմարիտ է, այդ ապստամբությունն էլ վերջացավ այնպես, ինչպես վերջացել էին նախկին փորձերը։ Յեկատերինյան միապետության լավագույն գեներալներն ու լավագույն զորավարները կանչվեցին ոգնելու այդ «առաքինի», «մարդասեր» ու փիլիսոփայող գահակալ տիկնոջը։ Շարժումը խորտակվեց, ճնշվեց անողորմ տերրորով. ժողովրդից հսկայական թվով մարդիկ մահապատժի յենթարկվեցին։ Պուգաչովը գերի ընկավ։ Ֆրանսիական փիլիսոփայությամբ զբաղվող, շատ «մարդասերի» ու «ազատասերի» հրոչակ ունեցող կայսրուհու կողմից առանձնապես մարդասիրական եր այն, որ նա հրամայեց «չարագործ» Յեմելկա Պուգաչովին դնել վանդակը, տանել Բալոտնայա հրապարակը և այնտեղ չորսհատել, այսինքն՝ հերթով կտրտել ձեռքերն ու վոտքերը, ապա նաև գլուխը, որն իկատար ածելու համարձակությունը չունեցավ դահիճը և, հրամանը չկատարելով, մի հարվածով վերջ տվեց գյուղացիության առաջնորդի տանջանքներին։

Այսպես վերջացավ այդ շարժումը։ Այնուհետև՝ ցարական ինքնակալության ամբողջ հետագա պատմության ընթացքում, ռեժիմը տապալելու նորանոր փորձեր ենք տեսնում և այդ ուղղությամբ արված յերկչոտ փորձեր նորածին բուրժուազիայի կողմից,—նկատի ունենք դեկաբրիստների շարժումը, որի հոբելյանը վաղուց չէ, որ կատարեցինք, և որի մասին վերջերս շատ խոսեցին ու գրեցին,—և խռովարար գյուղացիների հերոսական պայքարն այն շրջանում, որն անմիջապես հաջորդում է այսպես կոչված «գյուղացիների ազատությանը» ճորտական վիճակից՝ 1861 թվին, և հեղափոխական կուսակցությունների՝ ցարական ինքնակալության դեմ կազմակերպված կռվի այդ առաջին սաղմնային բջիջների պայքարը և պրոլետարիատի առաջին յելույթները։ Իվերջո՝ գալիս է 1905 թվականը, որն արդեն հիմնականորեն պարզորոշեց մեր յերկրում յեղած հասարակական ուժերի փոխհարաբերությունը ճիշտ այնպես, ինչպես որ նրանք դասավորվեցին 1917 թվականին հեղափոխության սկզբին։ Մեր թշնամի բանակին պատկանող ամենահեռատես մարդիկ գլխի եյին ընկնում այդ փոխհարաբերությունը։ Ցարիզմի տրամադրության տակ յեղած շատ սակավաթիվ հեռատես մարդկանցից մեկն եր վոչ անհայտ կոմս Վիտտեն։ Նա յել է հիշատակարան թողել, որն այժմ հրապարակված է։ Զափազանց շատ հետաքրքիր նյութեր պարունակող այդ վիտտեյան հիշատակարանից կբերենք մի հատված, որը ցույց կտա,

թե ինչպես եր այդ անպայման շատ խելոք մարդը պատկերացնում 1905 թվի հեղափոխությանը մասնակցող հասարակական ուժերի դասավորությունը, և թե, ընդսմին, ինչպիսի «զգացմունքներ» ուներ նա։ Ահա թե ինչ է գրում նա իրերի այն դրության մասին, վոր կազմվել եր 1905 թվականին.

«Ազնվականությունը տեսավ, վոր նա ստիպված պիտի լինի գաթան կիսել բուրժուազիայի հետ։ Այս մտքի հետ ազնվականությունը հաշտվում եր, բայց վոչ նա, վոչ էլ բուրժուազիան գիտակից պրոլետարիատի մասին չեին մտածել։ Վերջինս, այդ կարճատես գործիչների համար, միայն 1905 թվի սեպտեմբերին հանկարծակի հայտնվեց՝ իր ամբողջ տարերային ուժով։ Այդ ուժը հիմնված է և նրա թվի, և սակավ կուլտուրականության, և, հատկապես, այն հանգամանքի վրա, վոր նա կարցնելու վոչինչ չունի։ Հենց վոր նա մոտեցավ գաթային...» (Վիտտեն այստեղ մոռանում է ասել, վոր այդ «գաթան» արդարությամբ պատկանում է ժողովրդին, և գործն այնպես պատկերացնում, վոր իբրև թե այդ գաթան ուրիշինն է) (ծիծաղ), «սկսեց մռնչալ՝ իբրեվ գազան, վորը չի քաշվում կուլ տալուց այն ամենը, ինչ վոր իր ցեղից չէ։ Ահա յերբ ազնվականությունն ու բուրժուազիան տեսան այս գազանին, սկսեցին յետ-յետ գնալ, այսինքն սկսեց կատարվել աջացման պրոցեսը»։

Ամենևին վատ չէ ասված. «Ահա յերբ ազնվականությունն ու բուրժուազիան տեսան այս գազանին, սկսեցին յետ-յետ գնալ, այսինքն սկսեց կատարվել աջացման պրոցեսը»։ Նշանավոր տողեր են սրանք։ Վիտտեն այստեղ ճշտորեն է վերլուծում հասարակական ուժերի փոխհարաբերությունը, դասակարգերի փոխհարաբերությունը, ճիշտ այնպես, ինչպես վոր դասավորվել եր նա 1905 թվի հեղափոխության ժամանակ։ Բուրժուազիան վինթփինթում եր ցարական ինքնակալության դեմ, բայց նա, իդեմս պրոլետարիատի, գազան տեսավ և այդ գազանից ավելի վախեցավ, քան թե ինքնակալությունից, այդ պատճառով էլ սկսեց ավելի սերտ բլոկ հաստատել կալվածատիրոջ հետ, այսինքն նա հակահեղափոխական դարձավ։ Իրոք՝ այդպես էլ յեղավ, և հեղափոխության ամբողջ հետագա պարտությունը հաստատեց այդ։ Կոմս Վիտտեյի կողմից արած այդ զգաստ, համարյա բայլշևիկյան վերլուծությունը, իհարկե, համեմված է մեծագույն չարությամբ ընդդեմ պրոլետարիատի, վորը, պարզ է, հանդես է գալիս իբրև գազան, այն էլ «սակավ կուլտուրականությամբ»։ Պարզ է, վոր Վիտտեն ըստ ամենայնի կողմնակից եր,

վոր այդ «գազանին» վոդոդեյին պուլեմյոտային արձիճով՝ հաստատելով Ռուսատանի վայրի կալվածատեր-զուբրերի «գաթայի» վրա ունեցած անբաժանելի իրավունքը, այն կալվածատերերի, վորոնք հանդիսանում են կուլտուրայի ու քաղաքակրթության մարմնացում, վորի քնքուշ սիմվոլն են դարերի ընթացքում հաստատված նազայական ւո մsrակը։

Ուժերի այդ դասավորությունն ու դասակարգային խմբավորումների այդ ընդհանուր ուղղությունն իր ել ավելի սուր արտահայտությունը գտավ 1917 թվի հեղափոխության մեջ։ Ինչու։ Վորովհետև 1905 թվի հեղափոխությանը հաջորդող ժամանակամիջոցում մեր «սակավակուլտուր գազանը», մեր դասակարգը՝ պրոլետարիատը վոտքի յելավ, սկսեց միքիչ ավելի ուժեղ մռնչալ, քան 1905 թվին և, թերևս, ավելի կուլտուրական դարձավ։ Տնտեսական աճման զուգընթաց՝ նա աճեց թվով, յուրացրեց իր սեփական պատմության դասերը, կարողացավ իրենից լավ կազմակերպություն առաջացնել, սովորեց ճարպիկ խաղեր անել մյուս դասակարգերի հանդեպ, դեպի իրեն քաշեց գյուղական ծխերի անթիվ միլիոնները, վորոնք վոչ միայն «կորչի պատերազմը» գոռացին ու «մռնչացին», այլ և՝ «կալվածատերերի հողը տվե՛ք»։ Այժմ արդեն

վոչ միայն գյուղացիական «պուգաչովշչինան» եր նոր ձևով և կատաղի ուժով առաջ ժղվում, այլ և պրոլետարական գազանն եր իր ամբողջ հասակով դուրս յեկել և խոշոր քայլերով առաջանում եր՝ անցած ամբողջ շարժման գլուխը։ Այս պատճառով ել բոլորովին բնական ե, վոր բուրժուազիայի «աջացման» պրոցեսն անհավատալի արագությամբ առաջ գնաց։ Այդ աջացումը վոչ միայն «զտարյուն» բուրժուազիային ընդգրկեց, այլ և ժանր-բուրժուական կուսակցություններին, բոլոր այդ Ծերեթելիներին, Զերնովներին, Դաններին ու ընկերությանը, վորոնք, այդ «գազանին» տեսնելով, նույնպես չափազանց սարսափեցին։ Հասկանալի յե, թե ինչու մեր Հոկտեմբերյան հեղափոխությունը ես-երական կուսակցության խոշորագույն գաղափարախոսներից մեկի՝ Վիկտոր Զերնովի կողմից վոչ դեմոկրատիկ ե կոչվում և վոչ ել պրոլետարական։ Նրա համար նա մի նոր բառ ե գտել հունական բառարանում. «ոխլոկրատիա», այսինքն՝ խուժանի տիրապետություն։ Դժվար չե հասկանալ, վոր Զերնովի «խուժանը» գաղափարական ազգակցություն ունի Վիտտեյի «գազանի» հետ։ Սակայն թող «խուժան» լինի, թող «գազան» լինի, մենք թքել ենք դրա վրա՝ բարձր ծառի վրայից։ (Ծափահարություններ)։ Պատմականո-

բեն այն է կարևոր, վոր այդ «գազանն» ու նրա «գազանային», «ոխլոկրատիկ» կուսակցությունն ավելի խելոք ու հեռատես դուրս յեկան, քան թե բուրժուական ու համաձայնական ամեն տեսակի ու նրբությունների խելոքները։ Բայց այն, վոր նրանք մեր դասակարգին «գազան» ու «խուժան» են անվանում, այդ հարկավոր է հիշել։ Առաջին հերթին մեր գյուղացին պիտի հիշի այս, վորովհետև ամենևին էլ պատահական չէ միասնական ֆրոնտը՝ կազմված Չերնովից մինչև Նիկոլայ Նիկոլայևիչը։ Այդ կատաղի ատելության ու չարամտության ֆրոնտ է, վոր այնքան ավելի յե սանձարձականում, վորքան ավելի յե անհուսալի դառնում պրոլետարական դիկտատուրայի հակառակորդների գործը։

Ազնվականության՝ դեպի բանվորն ու գյուղացին տածած դասակարգային սանձարձակ, կլասսիկ ու ինքնատիպ հոյակապ ատելության նմուշ են հանդիսանում պարոն Շուլգինի՝ կալվածատիրական քաղաքակրթության այդ «մարդասեր» ու «կուլտուրական» մարտիկի, «ստեղծագործությունները»։

Շուլգինը խոսում է ամբողջ ժողովրդի մասին, վոչ թե ինչ-վոր բայլևիկների, մինչև անգամ վոչ թե պրոլետարական «գազանի», այլ մեր ամբողջ ժողովրդի։ Ահա թե ինչպես է նա նկարագրում Փետրվարյան հեղափոխությունը.

«Այդ ջրհեղեղի առաջին ակնթարթից հենց»— (Փետրվարյան հեղափոխությունն է այդ «ջրհեղեղը»։ Չե մի ջրհեղեղ չեր, շատերին խեղդեց)— (ծիծաղ, ծափահարություններ) զզվանքը վողողեց իմ հոգին և այդ ժամանակից սկսած այդ զզվանքը չհեռացավ ինձնից ռուսական «ժեծ» հեղափոխության ամբողջ տևողության ընթացքում։

«Մարդկային ջրանցքի անվերջ ու անսպառ հոսանքը նորանոր անձնավորություններ եր նետում Դուման... Սակայն վորքան էլ շատ լինեյին նրանք, բոլորն էլ մի դեմք ունեյին՝ գարշելիորեն կենդանական-բութ կամ գարշելիորեն դիվական-չար մի դեմք»... («Փետրվարյան հեղափոխություն» (ժեժուարները), ՊՀՐ. եջ. 89)։

Ասա.

«Աստված իմ, վորքան զզվելի՛ յեր այդ... Այնքան զզվելի, վոր ատամներս սեղմած, իմ մեջ մի ինչ-վոր կարոտող, անզոր, ուստի և առավել չար կատաղություն եյի միայն զգում։

— Պուլեմյոտնե՛ր։

— Պուլեմյոտներ—ահա ի՞նչ եյի ցանկանում յես։ Վորովհետև զգում եյի, վոր միայն պուլիմյոտների լեզուն է ժամչելի փողոցային ամբոխին, և վոր «միայն նա՛՝ արնիցը կարող է յետ՝ դեպի իր վորջը բերել ազատ արձակված անավոր գազանին։

«Ավա՛ղ, այդ գազանը... նորից մեծությունն ռուս ժողովուրդն եր...» (նույն տեղում)։

Ահա թե ինչպիսի զգացմունքներ ունեին «նրանք»։ Շուլգինն ուղղակի ու անկեղծ է խոսում վոչ միայն «գազանի», այլ և այդ «գազանի» դեմ հանելիք պուլեմյոտների մասին։ Հաժենայն դեպս, այս ել պիտի հիշի մեր յուրաքանչյուր գյուղացին. բանվորների մասին ել չեմ ասում։ Ահա թե ինչպես է ազնվականությունը գնահատում մեր ժողովրդյան ամբողջ աշխատավոր մասային։ Ահա այն անկեղծ լեզուն, վորով նա մեզ հետ կխոսեր կրկին, յեթե ժողովրդյան ձեռքը դողար, և յեթե «նրանք» բռնեին ժողովրդի կոկորդից։

Շուլգինը մի ուրիշ տեղ՝ հետևյալ յերեսին, գրում է.

«Հիշում եմ, այդ ամբողջ ու հետևյալ որը ինձ պատել եին մահվան մերձավորության զգայությունն ու պատրաստականությունը նրա հանդեպ...

«Մեռնե՞լ։ Թող այդպես լինի։

«Միայն թե չտեսնեմ այդ դարշելի ամբոխի զազիր դեմքը, չլսեմ այդ նողկալի ճառերը, չլսեմ այդ usnr խաժամուժի վոռնոցը։

«Ա՜խ, պուլեմյոտներ տվեք այստեղ, պուլեմյոտներ»... (նույնը, եջ 91)։

Այս լեզուն հաժարյա գեղարվեստական է։ Նա յուրահատուկ է և, իբրև այդպիսին, հաժարյա գեղեցիկ։ Մարդ այսպիսի բան կարդալիս

վորոշ բավականություն է ստանում։ Այստեղ տեսնում ենք, թե ինչ զսպանակներ են շարժում մեր հակառակորդներին։ Գիտենք, վոր բոլոր յերկրների գեներալ Հոֆմանները՝ մեր այդ «քաղաքակրթված» հակառակորդները, յերբեմն մեզ հետ շատ քաղաքավարի լեզվով են խոսում։ Բայց մենք գիտենք նույնպես, վոր նրանց լեզվի տակ թաղնված է նրանց իսկական՝ շուլգինյան լեզուն։ Ուստի այժմ, յերբ տեսնում ենք, վոր իմպերիալիստները մեր յերկրին նորից չարաժտորեն խեթ աչքով են նայում, պիտի մենք ինքներս ասենք մեզ. «Հաժենայն դեպս, պիտի պատրաստ լինենք»։ Յեվ յեթե այժմ գիտենք, վոր մեր հակառակորդներն անհապաղ մեր դեմ յելնելու ուժ դեռ չունեն, յեթե գիտենք, վոր մենք պիտի չափազանց հանգիստ ու չափազանց զսպված լինենք, ապա մենք, այնուամենայնիվ, դեպի առաջ պիտի նայենք ու պիտի գիտենանք փոխհարաբերությունը դիպլոմատիկական դարձվածքների ու շուլգինյան զգացմունքների, վորոնք դասակարգային թշնամիների իսկական վոգին են արտահայտում։

Մեր Փետրվարյան հեղափոխության 10-րդ տարելիցին՝ տարեդարձին Փետրվարի, վորը Հոկտեմբերի համբավաբերն է,—մեր դասակարգը, առաջնորդող դասակարգը, մեր բանվորական մեծ

դասակարգը, մեր պրոլետարիատը, իր ձեռքը գյուղացիությանը տալով, կրկին ու կրկին անգամ բարձրացնում է իր կարմիր դրոշը. էլ ավելի պայծառ է փայլելու մեր կարմիր աստղը՝ ամբողջ աշխարհովը մեկ. և մենք էլ ավելի համերաշխ, էլ ավելի արագ կամրացնենք մեր արյամբ նվաճած սոցիալիստական հայրենիքը։ Մենք մեր Խորհրդային Հանրապետությունների Միությունը կառուցանում ենք վոչ թե իբրև մի բանտ, այլ բոլոր ժողովուրդների համար մեծ ու յեղբայրական միություն ենք կերտում (մեր միության մեջ հարյուրից ավելի ազգություններ են ապրում). մենք վոչ թե նզովյալ կապիտալիստական շահագործման թագավորություն ենք կառուցանում, այլ գրանիտյա հզոր պատվար՝ գալիք սոցիալիզմի համար. մենք վոչ թե միջազգային ժանդարմական հողամաս ենք կառուցանում, այլ մեծ կազմակերպիչ ուժ ենք կոփում՝ ապագա պատմական ճակատամարտերի, միջազգային բանվորական դասակարգի վճռական հաղթանակի համար։ Այդ հաղթանակի համար ենք մենք ապրում և այդ հաղթանակի համար կանենք այն ամենը, ինչ վոր պատմությունը հանձնարարել է մեր դասակարգին՝ նրա պատասխանատու պատմական դիրքի վրա։ (Բուռն ծափահարություններ։ «Ինտերնացիոնալ»)։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
U.S.S.R. Публичная Библиотека
7/XI. 1922
Имени А. Маркиана

«Ազգային գրադարան»
NL0403958

3744

ԳԻՆԸ 25 ԿՈՊ.

9(47)„1917"
Բ-95